

նկարներուն՝ որ կը ծածկէին կամարները և պատերը, մասնաւորապէս Ս. Կուսի ննջման և յուզարկաւորութեան այն տեսարաններուն՝ որ գծուած էին նկարչութեան բիւզանդական Ուղեցոյցի կանոններուն համեմատ և ներշնչուած ըլլալով անվաւերական պատմութիւններով, կը ներկայացնէին թէ Յիսուս Տիրամօր հոգին իր բազկացը մէջ առած էր, արտասուած թոր աչքերով առաքեալք շրջապատած էին զազաղը, Յեփոնիա հրեան (ըստ Յայնաւորի, Սոփոնիա քահանայ) իր երկու ծայրատեալ բազուկները (moignons) զէպ իր մարմինը կը քաշէր, մինչ իր երկու կտրուած ձեռքերը գետնին լրայ կ'երենային. հրեշտակն էր որ պատժած էր Յեփոնիայի յանդուգն սրբապղծութիւնը: Երկու դուռներ կը բացուէին վարի սրահներուն ներքնակողմը: Մին՝ արեւելեան կողմը, որ հաղորդակցութիւն ունէր Գեթսեմանիի այրին հետ, միւսը՝ արեւմտեան կողմը, կը ներկայացնէր այն մուտքը ուրկէ առաքեալք Ս. Կուսին մարմինը փոխադրեցին: Աւելի վարը, երկու փոքր մատուռներ կը պարունակէին իշխանական գերեզմաններ: Աջ կողմինը՝ ամենէն նշանաւորն էր, վասն զի հոն թաղուած էր Մելիսանտ թագուհին, դուստր Պաղտին Բ. ի և կինը Foulques ի՝ Երուսաղէմի երրորդ թագաւորին, մեռած 1161 ին: Երկաթէ վանդակապատ մը կը պահպանէր անոր շիրիմը: Բաց աստի, հաւանաբար ձախ կողմի մատրան մէջ թաղուեցաւ Մարիամ՝ Պաղտին Բ. ի կինը, Կոստանս՝ Անտիոքի իշխան Պոէմոնտ Գ. ի մայրը, իր եղբայրը՝ Ռընօ և քոյրը Ֆիլիպպա:

Կուսին Գերեզմանին մօտ կային մաղթողական երկու արձանագրութիւններ և Յերոնիմոսի և Ս. Բարսեղի պատկերները, որ կը կրէին զրապանակներ՝ որոնց առաջնոյն վրայ կը կարդացուէին Յերոնիմոսի նամակներէն մասեր՝ Ս. Կուսի Գերեզմանին վերաբերեալ, իսկ երկրորդին վրայ՝ ոտանաւոր հատուած մը՝ ուրով Ս. Բարսեղ կը հերքէ Յուլիանոս կայսեր անբարչտութիւնը: Ստորերկրեայ եկեղեցիին դասը որուն կեդրոնը կը գտնուէր Ս. Կուսին Գերեզմանը, ցոյց կու տար Վերափոխման տեսարանը Օգոստ. 15 ի տօնախմբութենէն առնուած բազմաթիւ համարներով:

Մարմարներ և մոզայիքներ կը զարդարէին Ս. Կուսին Գերեզմանը, որուն ներքին բաժանումը խնամքով նկարագրուած է մուսագլի Դանիէլ կրօնաւորին կողմէն, հետեւեալ տղերով. «Այս